



Российский совет
по международным
делам



ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ՌՈՒՄԱՍՏԱՆԸ և ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Գեղամյան Վարուժան Գեղամի
Մելքոնյան Սերգեյ Գեորգիի
Ներսիսյան Լեոնիդ Աշոտի

Մոսկվա – Երևան 2019

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ և ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միջազգային հարաբերությունների համակարգի փոփոխությունը ուղեկցվում է նոր մարտահրավերների և վտանգների առաջացմամբ, որոնց դեմ պետությունների մեծագույն մասն ունակ չէ միայնակ պայքարելու: Մպառնալիքներից շատերը վերազգային, իսկ երբեմն նաև վերտարածաշրջանային բնույթ ունեն, ինչը բերում է համագործակցության երկկողմ և բազմակողմ ձևաչափերի ստեղծման, որոնք նպատակ ունեն արդյունավետ կերպով ապահովելու ազգային անվտանգությունը: ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծված պետությունները, հասկանալով այս նոր իրավիճակը, հանդես եկան տարածաշրջանային անվտանգության համակարգի ստեղծման նախաձեռնությամբ: Նախկին խորհրդային շատ հանրապետություններ անկախության առաջին տարիներին հայնտվեցին հակամարտությունների բովում, ինչը տարածաշրջանում կայունության ապահովվման տեսանկյունից արդիական դարձրեց միջպետական համագործակցության հարցերը:

Անվտանգության ապահովման ինստիտուտների և մեխանիզմների ձևավորման ճանապարհին հատուկ դեր խաղաց այս ոլորտում պատմական բազմադարյա համագործակցությունը: Դրա շնորհիվ առկա էին համապատասխան հիմք և հաղորդակցության ուղիներ, որոնք մասամբ հեշտացրին համագործակցության նոր ձևաչափերի ստեղծման գործընթացը: Մասնավորապես՝ համագործակցության նմանատիպ կուռտակված փորձ կար Հայաստան-Ռուսաստան հարաբերություններում: Գիտակցելով, որ միայն անվտանգության ոլորտում ձևավորված կապերի պահպանումը թույլ կտա արդյունավետ կերպով համատեղ դիմագրավել նոր մարտահրավերներին, երկու կողմերն էլ հանդես եկան այս ուղղությամբ սերտ համագործակցության անհրաժեշտության օգտին:

Հայաստանի և Ռուսաստանի դաշնակցային հարաբերությունների ռազմավարական բնույթը դրսևորվում է ոչ միայն երկկողմ համագործակցությամբ, այլև տնտեսության և անվտանգության ոլորտներում ինտեգրացմամբ: Այս միտումը ունի խոր հիմքեր, և առկա կողմնորոշման ճշգրտումների անհրաժեշտության մասին քննարկումներ, ըստ էության, չկան ո՛չ Մոսկվայում և ո՛չ էլ Երևանում: Այդ պատճառով երկու պետություններից որևէ մեկում ներքաղաքական իրավիճակի փոփոխությունը չի կարող լքջորեն ազդել երկկողմ հարաբերությունների ձևաչափի վրա: Պետական շահով չառաջնորդվող անձանց կողմից տարատեսակ սպեկուլյատիվ հայտարարությունները հարաբերությունների դաշնակցային բնույթի փոփոխության վերաբերյալ հիմնավորված չեն:

Հաշվի առնելով շարունակվող անկայունությունը Մերձավոր Արևելքում (որտեղ Ռուսաստանը հանդիսանում է հիմնական դերակատարներից մեկը, իսկ Հայաստանը փաստացի կազմում է այդ տարածաշրջանի մասը)՝ անվտանգության ոլորտում Երևանի և Մոսկվայի միջև համագործակցության խորացումը դառնում է էլ ավելի կարևոր: Թե՛ գործակցության երկկողմ բազմաթիվ ձևաչափերի առկայությունը, թե՛ ռազմական (ՀԱՊԿ) և տնտեսական (ԵԱՏՄ) դաշինքներում երկու պետությունների անդամությունը ճիշտ մոտեցման դեպքում կարող է հնարավորություն ընձեռել համատեղ բախատանքի արդյունավետությունը բարձրացնելու նոր մակարդակի: Ավելին, հայ-ռուսական հարաբերությունների կատարելագործումը թույլ կտա ձևավորել ավելի բազմակողմ կապեր՝ նպատակ ունենալով զարգացնել գործակցությունը նոր ոլորտներում և նոր ձևաչափերում: Մա, իր հերթին, կօգնի անվտանգության համակարգի մեջ ներգրավել տարածաշրջանային նոր խաղացողների՝ այդպիսով ամրապնդելով արդեն գոյություն ունեցող ձևաչափերը:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Գեղամյան Վարուժան – պ.գ.թ., ARDI Lab հետազոտական կենտրոնի տնօրեն, Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դասախոս, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի արտահաստիքային փորձագետ

Մելքոնյան Սերգեյ – ARDI Lab հետազոտական կենտրոնի մերձավորարևելյան հետազոտությունների ծրագրի ղեկավար, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի Իսրայելի և հրեական համայնքների ուսումնասիրության բաժնի աշխատակից

Ներսիսյան Լենիդ – ARDI Lab հետազոտական կենտրոնի անվտանգային հետազոտությունների ծրագրի ղեկավար, «Новый оборонный заказ. Стратегии» ամսագրի շեֆ-խմբագիր, «REGNUM» լրատվական գործակալության ռազմական մեկնաբան, Jane's ռազմական հրատարակչության արտահաստիքային վերլուծաբան, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի արտահաստիքային փորձագետ

Փաստացի, կարիք չկա ստեղծելու համագործակցության նոր մեխանիզմներ, սակայն կարևոր է գոյություն ունեցող մեխանիզմների արդիականացումը՝ թե՛ ՀԱՊԿ

շրջանակներում, թե՛ հայ-ռուսական երկկողմ ռազմատեխնիկական համագործակցության առումով, որի ներուժը կարող է նկատելիորեն ավելի լայն լինել, քան այսօր գոյություն ունեցողը:

Անվտանգության ոլորտում Ռուսաստան-Հայաստան համագործակցությունը

ԻՄՅՄ փլուզումից հետո անվտանգության ոլորտում հայ-ռուսական հարաբերությունները զարգացել են գերազանցապես մի քանի հիմնական ուղղություններով և մի շարք ինստիտուտների միջոցով: Այս պահին համատեղ աշխատանքն իրականացվում է հետևյալ ձևաչափերով:

Ռուսաստանի ՌԱՍՄԱԲԱԶԱ:

Ըստ ստորագրված համաձայնագրերի՝ երկու պետությունները ճանաչում են, որ ռուսական 102-րդ ռազմական բազայի առկայությունը նպատակ ունի տարածաշրջանում ապահովել խաղաղությունը¹, ինչը վերջինիս օժտում է հատուկ գործառնությամբ, այն է՝ ապահովել կայունություն Հարավային Կովկասում: Այսպիսով, բացի երկու դաշնակից պետությունների անվտանգությունը և շահերի պաշտպանությունը ապահովելուց, ակնհայտ է, որ ռուսական ռազմական ներկայությունը ունի ոչ միայն ազգային, այլև տարածաշրջանային նշանակություն, ինչը առավել արդիական է դառնում՝ պայմանավորված Ռուսաստանի մերձավորարևելյան քաղաքական գծի ակտիվացմամբ:

Հայաստանում՝ Էրեբունիում է տեղակայված նաև ռազմական օդանավակայանը, որը կազմում է 102-րդ ռազմաբազայի օդային բաղադրիչը: Այն սիրիական սահմանից զտնվում է 370 կմ հեռավորության վրա: Մինչդեռ Ռուսաստանի տարածքում ամենահարավային՝ Մոզդոկի օդակայանից մինչև Սիրիա հեռավորությունը երկու անգամ ավելի մեծ է: Այս առումով Էրեբունու 3624-րդ բազայի կարևորությունը դարձավ նշանակալի այն բանից հետո, երբ օդակայանը օգտագործվեց որպես Ռուսաստանից Սիրիա ուղևորվող СУ-30СМ բազմանպատակ կործանիչների վառելիքի վերալիցքավորման կանգառ: Հնացած МиГ-29 կործանիչները ժամանակակից СУ-30СМ բազմանպատակ կործանիչներով փոխարինելու մտադրության մասին Մոսկվայի հայտարարությունները վկայում են Հայաստանի տարածքում ռուսական ռազմական ներկայության առանձնահատուկ գործոնի մասին, որը

նպատակ ունի ապահովել տարածաշրջանային անվտանգությունը երկարաժամկետ հեռանկարում:

ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀԱՊԿ):

Ռուսաստանը, որը վերջին հարյուրամյակների ընթացքում ձգողականության բևեռ էր հանդիսանում Արևելյան Եվրոպայի, Միջին Ասիայի և Հարավային Կովկասի պետությունների համար, շարունակում է լինել հետխորհրդային տարածքի անվտանգության ապահովման համակարգի առաջատարն ու առանցքային գործոնը: Նպատակ ունենալով պահպանել այս ուղղությամբ ունեցած ազդեցությունը, ինչպես նաև ելնելով իր սահմանների երկայնքով անվտանգության ապահովման անհրաժեշտությունից՝ Մոսկվան հանդես եկավ Հավաքական անվտանգության պայմանագրի հիման վրա համագործակցության նոր ձևաչափի ստեղծման նախաձեռնությամբ: Հայաստանը Պայմանագրին միացած առաջին պետությունների շարքում էր, իսկ ավելի ուշ դարձավ ՀԱՊԿ ստեղծման համաձայնագիրը վավերացրած պետություններից մեկը:

Հայաստանի տարածքում գործում է ՀԱՊԿ Ինստիտուտը (Տեղեկատվական աջակցության միջազգային հասարակական կենտրոնի ազգային մասնաճյուղը), որի գլխավոր խնդիրն է կազմակերպության գործունեության տեղեկատվական աջակցությունը:² ՀԱՊԿ-ում Հայաստանի առանձնահատուկ տեղը պայմանավորված է այն հանգամանքով, որ Երևանը փաստացի հանդիսանում է սառեցված հակամարտության կողմ: Հայաստանի համար ՀԱՊԿ-ին անդամակցության գլխավոր առավելություններն են՝ ներքին շուկայի գներով ռազմամթերքի ձեռքբերման հնարավորությունը և կոլլեկտիվ անվտանգության երաշխիքները, որոնք ամրագրված են ՀԱՊԿ Կանոնադրության 4-րդ հոդվածում:³ Եթե զենքի ձեռքբերման պայմանները չեն խախտվում, ապա առավել սուր հարցերի դեպքում միասնական դիրքորոշման բացակայությունը թույլ չի

¹ Հայաստանի Հանրապետության տարածքում Ռուսաստանի ռազմական ներկայության իրավական հիմքերը ամրագրված են ՀՀ տարածքում գտնվող ՌԴ ՉՈՒ իրավական կարգավիճակի մասին պայմանագրում (21 օգոստոս, 1992թ.) և ՌԴ և ՀՀ միջև ՀՀ տարածքում ռուսական ռազմական բազայի մասին պայմանագրում (16 մարտ, 1995թ., փոփոխված՝ 20 օգոստոս, 2010թ.):
² О деятельности института ОДКБ на территории Армении // Официальный сайт ОДКБ. URL: <http://www.odkb-armenia.am/index.php/ru/institut-odkb/13-deyatelnost-organizatsii>
³ Договор о коллективной безопасности от 15 мая 1992 г. // Официальный сайт ОДКБ. URL: https://odkb-csto.org/documents/documents/dogovor_o_kollektivnoy_bezopasnosti/

տալիս կիրառել 4-րդ հոդվածը՝ չնայած դրա պարտադիր բնույթին:

ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ:

Երկու երկրների միջև կնքված պայմանագրի⁴ համաձայն՝ Ռուսաստանի սահմանապահ զորքերը մասնակցում են Հայաստանի պետական սահմանի պահպանությանը թուրքական և իրանական ուղղություններով: Համատեղ աշխատանքի ընթացքում ՌԴ Անվտանգության դաշնային ծառայության և ՀՀ Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ վարչության կողմից բազմիցս կատարվել են թմրամիջոցների մաքսանենգության դեպքեր, ինչպես նաև խոչընդոտվել են երրորդ երկրների քաղաքացիների ներթափանցման դեպքերը:⁵ Պետական սահմանի համատեղ հսկումը նվազեցնում է Հայաստանի սահմանապահ ուժերի և զինված ուժերի անձնակազմի վրա ընկնող ծանրաբեռնվածությունը, ինչը հնարավորություն է տալիս կենտրոնանալ Ադրբեյջանի հետ սահմանային դիրքերի ամրապնդման վրա: Միևնույն ժամանակ Մոսկվայի համար ցամաքային ընդհանուր սահմանի բացակայության պայմաններում Հայաստանի միջոցով Թուրքիայի և Իրանի տարածքների հետ ուղիղ կապը հանդիսանում

է ռուսական պետության սահմաններից դուրս ազգային շահերի կենսագործման Էական գործոն:

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ՉՈՐԱԽՈՒՄԸ:

2017 թվականին երկու երկրների միջև վավերացված համաձայնագիրը նախատեսում է ընդհանուր հրամանատարությամբ համատեղ ծրագրավորում և Հայաստանի ու Ռուսաստանի ազգային անվտանգությանը սպառնացող վտանգներին արձագանքում:⁶ Այդպիսով, երկու պետություններն էլ ստանձնում են երկուստեք անվտանգության մշտական ապահովման պարտավորություն, ինչը վկայում է այս ուղղությամբ ինտեգրացման բարձր մակարդակի մասին: Հայ-ադրբեյջանական սահմանին ծագող լարվածության և Էսկալացիայի վերաբերյալ ՀԱՊԿ-ի դաշնակիցների դիրքորոշումների տարբերության համատեքստում Երևանի համար կարևոր են Մոսկվայի կողմից տրված երաշխիքները: Միևնույն ժամանակ այս համաձայնագիրը հնարավորություն է տալիս Ռուսաստանին վերջնականապես ամրապնդվել Հարավային Կովկասում, որը համարվում է «պատուհան» դեպի Մերձավոր Արևելք՝ այդպիսով ընդլայնելով սեփական անվտանգության սահմանները:

ՀԱՊԿ. ինչպես ակումբը վերածել արդյունավետ ռազմական դաշինքի

Անվտանգության ոլորտում հայ-ռուսական երկկողմ համաձայնագրերից բացի կարևոր է նաև Հայաստանի անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ), որում նշանակալի դեր է խաղում Ռուսաստանը: Այս ռազմական դաշինքը վերջնականապես ձևավորվել է 2002 թվականին, երբ անդամ պետությունների կողմից (Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Արդգստան, Ռուսաստան և Տաջիկստան) հաստատվեց կազմակերպության կանոնադրությունը և ստորագրվեց ՀԱՊԿ կարգավիճակի մասին համաձայնագիրը:⁷ Հետագայում դաշինքը զարգանում էր մեծամասամբ ՆԱՏՕ նմանությամբ. 2009 թվականին որոշ դժվարությամբ (Բելառուսը միանգամից չհամաձայնվեց ստորագրել) ստեղծվեցին Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերը (ՕԱՀՈՒ):⁸ Մեկ այլ խիստ նշանակալի իրադարձություն էր ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի նշանակման ռոտացիոն

սկզբունքի ներդրումը 2015 թվականի դեկտեմբերին (մինչ այդ տվյալ պաշտոնը մշտապես զբաղեցնում էր Ռուսաստանի ներկայացուցիչ Նիկոլայ Բորոյնովսկին):⁹ Այժմ գլխավոր քարտուղարի պաշտոնը յուրաքանչյուր երեք տարին մեկ այբբենական կարգով փոխանցվում է ՀԱՊԿ անդամ հաջորդ պետությանը:

Կազմակերպությունը բավական ներդաշնակ տեսք ուներ և առանձնակի դժգոհությունների տեղիք չէր տալիս: Սակայն իրականում ՀԱՊԿ-ում մշտապես կային բազմաթիվ խնդիրներ. ոչ հազվադեպ անդամ պետությունների արտաքին քաղաքական դիրքորոշումների արմատական անհամապատասխանությունը, ընդհանուր մարտահրավերների, համատեղ ռազմական և խաղաղապահ գործողությունների գրեթե իսպառ բացակայությունը, գլխավոր քարտուղարի փոփոխության մեխանիզմի թերի լինելը և այլն:

⁴ Договор между Российской Федерацией и Республикой Армения о статусе Пограничных войск Российской Федерации, находящихся на территории Республики Армения, и условиях их функционирования (Ереван, 30 сентября 1992 г.)

⁵ О пограничном управлении ФСБ РФ // Официальный сайт Посольства Российской Федерации в Республике Армения. URL: <https://armenia.mid.ru/pogranichnoe-upravlenie-fsb-ru>

⁶ Армения ратифицировала соглашение с РФ об объединенной группировке войск // Интерфакс. 5.10.2017. URL: <https://www.interfax.ru/world/581847>

⁷ От Договора к Организации о коллективной безопасности // Официальный сайт ОДКБ. URL: <https://odkb-csto.org/25years/>

⁸ Внеочередная сессия Совета коллективной безопасности Организации Договора о коллективной безопасности (ОДКБ) // Официальный сайт Президента России. 4.02.2009. URL: <http://kremlin.ru/events/president/news/3054>

⁹ Решение Совета коллективной безопасности Организации Договора о коллективной безопасности «О ротации должностных лиц постоянно действующих рабочих органов Организации Договора о коллективной безопасности». Москва. 21.12.2015. URL: https://online.zakon.kz/Document/?doc_id=38336915#pos=1;-31

Այս խնդիրները ծագում են առաջին հերթին այն պատճառով, որ կազմակերպության անդամները ունեն տարբեր շահեր և չունեն մեկ ընդհանուր հակառակորդ, ինչը կդառնար միավորող գործոն (ՆԱՏՕ-ի պարագայում այդպիսի գործոն էր ԽՍՀՄ-ը, իսկ 2014 թվականից հետո՝ մասնակի այդպիսին դարձավ Ռուսաստանը): Բավական դժվար է պատկերացնել, որ օրինակ՝ Տաջիկստանը կպատերազմի Ադրբեջանի դեմ՝ վերջինիս և Հայաստանի միջև հակամարտության պարագայում, կամ էլ Բելառուսը կպաշտպանի Տաջիկստանի սահմանները Աֆղանստանից ներթափանցող իսլամիստ զինյալներից և նմանատիպ այլ իրավիճակներ: Այստեղ առավել ուժեղ են յուրաքանչյուր պետության ուղղահայաց կապերը Ռուսաստանի հետ՝ ի հակադրություն միմյանց միջև առկա հորիզոնական կապերի: ՀԱՊԿ Կանոնադրության 9-րդ հոդվածում նշված է այն մասին, որ «անդամ պետությունները համաձայնեցնում և կոորդինացնում են իրենց արտաքին քաղաքական դիրքորոշումները միջազգային և տարածաշրջանային անվտանգության խնդիրների վերաբերյալ»:¹⁰ Այս դրույթը ոչ միշտ է իրագործվում: Հայաստանը եզակի բացառություն է և հետևողականորեն կատարում է վերոնշյալ դրույթի պայմանները (բավական է նայել, թե ինչպես է, օրինակ, Երևանը քվեարկում ՄԱԿ-ում Ռուսաստանին Ղրիմի միավորման հարցում): Դասական դաշինքի ձևավորման համար ՀԱՊԿ բոլոր անդամ պետությունները պարտավոր են հետևել այս օրինակին, ինչպես նաև սեփական սուվերենության մի մասը հավասարապես փոխանցեն կազմակերպությանը: Միայն այս պարագայում է հնարավոր վերածվել տարածաշրջանային ուժեղ կազմակերպության:

ՀԱՊԿ ամենաիրական և առանցքային շարժիչ ուժը մշտապես եղել է Ռուսաստանի հետ ռազմատեխնիկական արտոնյալ համագործակցությունը: Հայաստանի համար այս կետը ունի կարևորագույն նշանակություն՝ հաշվի առնելով ավելի հարուստ Ադրբեջանի հետ հակամարտությունը, սակայն այն պակաս կարևոր չէ նաև այլ անդամ պետությունների և մասնավորապես՝ Բելառուսի համար, որը ռուսական ռազմարդյունաբերական համալիրի ձեռնարկությունների հետ ունի ամուր համագործակցություն: Ռուսաստանի համար սա վատ գործիք չէ հետխորհրդային տարածքի վրա ազդեցությունը պահպանելու տեսանկյունից, քանի որ ռազմատեխնիկական համագործակցության այդչափ շահավետ պայմանները լուրջ փաստարկ են պետության աշխարհաքաղաքական կողմնորոշման

մեջ: Բացի այդ ՀԱՊԿ գծով դաշնակիցներին ռուսական տեխնիկա մատակարարելը հնարավորություն է տալիս ունենալ ռազմամթերքի, կապի, պահեստամասերի և այլ միասնական չափանիշներ, ինչը շատ կարևոր է (փոխլրացում և պարզեցված յոգիստիկա) ռազմական արդյունավետ գործողություններ վարելու համար: Ռուսաստանին սա թույլ է տալիս իր սահմանների մոտ ձևավորել որոշակի բուֆերային գոտի, մասնավորապես՝ հակաօդային պաշտպանության ոլորտում (դաշնակիցների ռադիոլոկացիոն կայաններից ստացվող տեղեկատվությունը թույլ է տալիս վերահսկել օդային տարածքը զգալիորեն ավելի մեծ հեռավորության վրա):

ՀԱՊԿ կարևորագույն բաղադրիչը՝ ՕԱՅՌԻ-ն առաջին հայացքից ունի բավական մեծ անձնակազմ՝ 20 հազար մարդ:¹¹ Սակայն իրականությունը այլ է. յուրաքանչյուր անդամ-պետություն ուղարկում է իր մի քանի ստորաբաժանումներ համատեղ զորավարությունների, սակայն ժամանակի մեծ մասը այդ զորքերը տեղակայված են լինում իրենց երկրների տարածքում: Ավելի արդյունավետ կլինեք համատեղ այնպիսի մշտական ստորաբաժանման ստեղծումը (հավանաբար՝ ավելի քիչ անձնակազմով), որը կարող էր որոշակի հերթականությամբ փոխել տեղակայման վայրը, որպեսզի ծանոթ լինեք ռազմական գործողությունների ցանկացած հնարավոր թատերաբեմի հետ:

Բացի վերոնշյալ դժվարություններից՝ ՀԱՊԿ-ն ունի որոշակի խնդիրներ նաև նորմատիվ-իրավական տեսանկյունից: Այդ բացթողումները, թերևս, հանգեցրին կազմակերպության ամենալուրջ ճգնաժամին. Հայաստանը, որը ռոտացիոն համակարգի ներդրումից հետո առաջինը ստացավ գլխավոր քարտուղարի պաշտոնը՝ ի դեմս գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովի¹², 2018 թվականի «Թավշյա հեղափոխությունից» հետո քրեական գործ հարուցեց Խաչատուրովի դեմ և ավելի ուշ հետ կանչեց նրան իր զբաղեցրած պաշտոնից: Այս ամենը ուղեկցվում էր միջազգային սկանդալով: Ընդ որում՝ իրավիճակը բարդանում էր այն պատճառով, որ Կանոնադրության մեջ բացակայում էր ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի լիազորությունների վաղաժամ դադարեցման դեպքում քարտուղարի փոփոխության ֆիքսված մեխանիզմը: Արդյունքում Հայաստանը հրաժարվեց զիջել Բելառուսի թեկնածուին և մինչև նախագահության եռամյա ժամկետի լրանալը ՀԱՊԿ-ը կշարունակի գլխավորել Ռուսաստանից ժամանակավոր պաշտոնակատար Վալերիյ Սեմերիկովը (Բելառուսը իր հերթին թույլ

¹⁰ Устав Организации Договора о коллективной безопасности от 7 октября 2002 г. // Официальный сайт ОДКБ. 26.04.2012. URL: https://odkb-csto.org/documents/documents/ustav_organizatsii_dogovora_o_kollektivnoy_bezopasnosti/

¹¹ От Договора к Организации о коллективной безопасности // Официальный сайт ОДКБ. URL: <https://odkb-csto.org/25years/>

¹² Юрия Хачатурова назначили генеральным секретарем ОДКБ // РИА Новости. 14.04.2017. URL: <https://ria.ru/20170414/1492253285.html>

¹³ Кандидатура Станислава Засы внесена на должность генсека ОДКБ // ТАСС. 22.05.2019. URL: <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/6459277>

չտվեց Հայաստանին մինչև ժամկետի լրանալը նշանակել այլ թեկնածու):¹³

Այս իրավիճակում գլխավոր խնդիրն այն է, որ գլխավոր քարտուղարի հետևանքի փոխարեն ռազմական դաշինքում կարող են պատահել ավելի տհաճ և անկանխատեսելի

իրավիճակներ, օրինակ՝ գլխավոր քարտուղարի ծանր վիրավորում կամ ընդհուպ մինչև մահ: Ռազմական պայմաններում այդպիսի անորոշությունը անթույլատրելի է: Այդ պատճառով արդյունավետ մեխանիզմի մշակումը խիստ անհրաժեշտ է:

«Ինտեգրացումների դիֆուզիա». Հայաստանը որպես կամուրջ երկու աշխարհաքաղաքական միավորումների միջև

Հետխորհրդային տարածքում տեղի ունեցած աշխարհաքաղաքական առանցքային իրադարձություններից մեկը դարձավ Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ) միանալու մասին 2013 թվականին Հայաստանի ղեկավարության որոշ առումներով «անսպասելի» հայտարարությունը: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի համար Մոսկվայի՝ իր գլխավոր ռազմավարական արտաքին քաղաքական գործընկերոջ հետ աշխարհաքաղաքական մերձեցումը օրինաչափ և բնական գործընթաց է, սակայն ԵԱՏՄ-ին միանալու մասին հայտարարելու և համաձայնագիրը ստորագրելու ժամանակ կային տարակուսանք և լայն տարածայնություններ առ այն, թե որքանով է նպատակահարմար Երևանի նմանօրինակ ընտրությունը:

Մասնավորապես, հասարակական-քաղաքական քննարկումը ընթանում էր երկու հիմնական դաշտում՝ տնտեսական և «քաղաքակրթական»: Առաջինում լայնորեն քննարկվում էին Հայաստանի համար մաքսային տարբեր պայմաններ ունեցող երկու տարաբնույթ տնտեսական գոտիների հետ զուգահեռ աշխատանքը:¹⁴ Այսպես կոչված «քաղաքակրթական» դաշտում գլխավոր հարցը կապված էր զարգացման երկու տարբեր մոդելների միջև ընտրության հետ: Այդ ընտրությունը ենթադրում էր՝ մի կողմից դաշինք արևմտյան ժողովրդավարական երկրների հետ, իսկ մյուս կողմից՝ դաշինք, որտեղ գերակա կարգավիճակ ունի Ռուսաստանը:¹⁵

Պետք է նշել, որ վերոնշյալ քննարկումները գերազանցապես բխում էին այն պատկերացումից, որ ԵԱՏՄ-ին անդամակցության հարցը կհանգեցնի զուգահեռ ընթացող Եվրոպական Միության (ԵՄ) հետ

Երևանի հարաբերությունների խորացման գործընթացի հետ ուղիղ հակասության:¹⁶

Այնուամենայնիվ, բացառությամբ «ազատ շուկայի» և անմաքս առևտրի մասին հարցերի¹⁷, «Արևմուտք կամ Ռուսաստան» աշխարհաքաղաքական երկրնտրության (դիխոտոմիա) առկայության և ակտիվ քննարկման պատճառները պետք է փնտրել առաջին հերթին տարածաշրջանային տարբեր միությունների միջև աշխարհաքաղաքական լարվածության աճի համատեքստում: Այս լարվածությունը, որը ժամանակ առ ժամանակ ստանում է հակամարտության հատկանիշներ, առանձնապես զգացվում է այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսին է Հարավային Կովկասը (կամ Մերձավոր Արևելքը), որտեղ ինչպես տարածաշրջանի ներսում, այնպես էլ արտաքին դերակատարների հետ փոխհարաբերությունների բարդ համակարգի պատճառով միջազգային հարաբերությունները բոլորովին այլ տեսք ունեն և այլ կերպ են մեկնաբանվում: Արդյունքում պետությունները երբեմն հայտնվում են այսպես կոչված «ինտեգրացումների երկրնտրանքի» առջև:¹⁸

Նշված համատեքստում կար հավանականություն, որ Եվրոպական «բևեռի» հետ Հայաստանի մերձեցման գործընթացը կարող է փակուղի մտնել ինտեգրացումների անհնարինության պատճառով: Սակայն 2015 թվականի վերջին, երբ Հայաստանը արդեն ԵԱՏՄ և Մաքսային միության լիարժեք անդամ էր, սկսվեց Հայաստան-ԵՄ բանակցությունների նոր փուլը: Երկու կողմերի դիվանագիտական շրջահայաց և հետևողական աշխատանքի շնորհիվ 2017 թվականի նոյեմբերին ստորագրվեց ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (CEPA):¹⁹ Փաստաթուղթը նախատեսում է հարաբերությունների խորացում բոլոր

¹⁴ Что, возможно, ждало Армению в случае подписания Соглашения с ЕС? // PanArmenian.Net. 19.10.2013.
URL: <http://www.panarmenian.net/rus/details/171526>

¹⁵ Что выгоднее Армении: евроинтеграция или сближение с Россией? // Радио Свобода. 5.09.2013.
URL: <https://www.svoboda.org/a/25096459.html>

¹⁶ EU loses Armenia to Russia's Customs Union // Euractiv. 4.09.2013.
URL: <https://www.euractiv.com/section/armenia/news/eu-loses-armenia-to-russia-s-customs-union/>

¹⁷ Ազատ առևտրի երկու գոտիների հետ զուգահեռ աշխատանքը իսկապես իրատեսական չէր բոլոր կողմերի համար տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից:

¹⁸ «Ինտեգրացումների երկրնտրանք» («дилемма интеграции») եզրը առաջարկել են հետազոտողներ Մ. Տրոիցկին և Ս. Չարափը: Համաձայն այս հեղինակների՝ այս երկրնտրանքի առջև հայտնվում է «... այն պետությունը, որը սեփական անվտանգությանը որպես սպառնալիք է ընկալում հարևան երկրների ինտեգրացումը իր համար անհասանելի տնտեսական կազմակերպություններ կամ ռազմական դաշինքներ»: Տե՛ս Троицкий М., Чарап С. Дилемма интеграции на постсоветском пространстве // Россия в глобальной политике. 7.11.2013.
URL: <https://globalaffairs.ru/number/Dilemma-integracii-na-postsovetском-prostranstve-16177>

¹⁹ Соглашение о расширенном и всеобъемлющем партнерстве Армения — ЕС» (CEPA). Брюссель. 25.09.2017.
URL: <http://data.consilium.europa.eu/doc/document/ST-12525-2017-ADD-1/en/pdf>

ուղորտներում և Հայաստանի աստիճանական ինտեգրացում Եվրոպական ընտանիքին:²⁰

Եթե ուշադիր ուսումնասիրել թե՛ բանակցությունների գործընթացը, և թե՛ փաստաթղթի տեքստը, ապա ակնհայտ կդառնա, որ ստորագրված համաձայնագիրը ձեռք է բերվել ամառին հերթին շնորհիվ առկա սոցիալ-քաղաքական իրողությունների փոխադարձ ըմբռնման և դրանց հանդեպ հարգանքի: Հատկապես արժե նշել, որ առանց տարածաշրջանային և գլոբալ համատեքստում հայ-ուսական հարաբերությունների դերի կարևորության ընկալման Երևանի և Բյուրսելի միջև բանակցությունները կպասկվեին անհաջողությամբ: Այս առումով CEPA-ն կարելի է համարել նորագույն ժամանակների համար յուրահատուկ քաղաքական փաստաթուղթ, որում համեմատաբար հաղթահարված է աշխարհաքաղաքական երկրնորոշման խնդիրը, և «ինտեգրացումների երկրնորոշման» վերաձևակերպվել է «ինտեգրացումների դիֆուզիայի»²¹: Շնորհիվ այդ տարալուծման երկու մեծ ինտեգրացիոն նախագծեր ստացել են կապի և գործողությունների յուրահատուկ համատեղ հարթակ: Սակայն փաստաթղթի ստորագրությունը մնաց ստվերում և քաղաքական գործիչների ու փորձագետների կողմից չարժանացավ բավականաչափ բնութային 2018 թվականին Հայաստանում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների պատճառով (կառավարման համակարգի փոփոխությունից, ապա նաև իշխող վերնախավի փոփոխությունից հետո տևական ժամանակ ուշադրության կենտրոնում հայտնվեց գերազանցապես ներքաղաքական օրակարգը):

Չնայած այս հանգամանքին, ԵԱՏՄ և ԵՄ հետ Հայաստանի հարաբերությունների փորձը չի կորցրել իր արդիականությունը: Ընդհակառակը՝ դրա նշանակությունը մեծացել է: ԱՄՆ և Ռուսաստանի միջև շարունակվող հակամարտությունը, որը ազդում է ԵՄ-Ռուսաստան հարաբերությունների վրա, Մերձավոր Արևելքում լարվածությունը (ամառին հերթին Իրանի և Սիրիայի շուրջ), Չինաստանի և ԱՄՆ միջև լարվածության աստիճանական մեծացումը (այս լարվածությունը նոր-նոր է ուրվագծվում) հանգեցնում են գլոբալ աշխարհի բևեռացմանը: Արդյունքում հատկապես փոքր պետությունները մշտապես կանգնում են բևեռի ընտրության խնդրի առջև, և այդպիսով էլ ավելի են ուժեղանում առկա հակասությունները: Այս գործընթացն իր հերթին բերում է նոր մակրո- և միկրո-տարածաշրջանային ինտեգրացիոն միությունների ստեղծման, որոնք երբեմն

իրենց անդամների համար դնում են բավական բարդ պայմաններ (վերջին նմանատիպ օրինակը *Middle East Security Alliance (MESA)* նախագիծն է):²² Այս պարագայում ինտեգրացման գործընթացի հակառակ կողմը այլ երկրների հետ ապահիստեգրացումն է, որը հաճախ չի բարձրաձայնվում:

Ստեղծված իրավիճակում միակ տրամաբանական լուծումը կարելի է համարել խոշոր ինտեգրացիոն միությունների միջև կամուրջների կառուցումը: Նմանատիպ կամուրջ-երկրի օրինակ կարող է ծառայել Հայաստանը, որը, ինչպես մենք ցույց տվեցինք, իր արտաքին քաղաքականության շրջանակներում համատեղում է Ռուսաստանի հետ ռազմավարական հարաբերությունները՝ մի կողմից և մյուս կողմից՝ ԵՄ-ի հետ սերտ համագործակցությունը:

Հետաքրքրական է, որ Հայաստանը նմանատիպ դեր է սկսել խաղալ նաև Մերձավոր Արևելքում, ինչը հիմնված է հայկական յուրօրինակ պատմական ժառանգության վրա (ամառին հերթին՝ խլամադավան ժողովուրդների և երկրների հետ բազմադարյա հարաբերությունների պատմություն): Այսպես, Իրան-Հայաստան ռազմավարական հարաբերություններին զուգահեռ զարգանում են Երևանի հարաբերությունները Շոցի երկրների հետ: Դրանք ոչ միայն չեն հակասում մեկը մյուսին, այլ, ընդհակառակը, փոխլրացնում են միմյանց: Այսպես, օրինակ, 2019 թվականին հայտնի դարձավ այն մասին, որ հայկական հեռահաղորդակցային ընկերություններից մեկը մեծ գործարք է կնքել՝ դառնալով նոր համացանցային միջանցքի հիմնական մատակարար մի կողմից Կատարի, Իրանի և Շոցի երկրների, մյուս կողմից՝ Եվրոպայի միջև:²³ Ակնհայտ է, որ այս բազմակողմ համագործակցությունը դուրս է գալիս հասարակ բիզնես-նախագծի շրջանակներից և ունի աշխարհաքաղաքական նշանակություն: Այս և նմանատիպ այլ օրինակները ակնառու կերպով ցույց են տալիս, որ Հայաստանը Մեծ Մերձավոր Արևելքում ունի հնարավորություններ ներկայանալու որպես յուրահատուկ կամուրջ: Սա երկարաժամկետ հեռանկարում կարող է նպաստել տարածաշրջանում խաղաղության և կայունության ապահովմանը: Նմանատիպ նախաձեռնությունները տեղավորվում են այն բանաձևի մեջ, որը աստիճանաբար ամառ է տանում Հայաստանի նոր նախագահ Արմեն Սարգսյանը և որը ներկայացվել էր 2019 թվականի փետրվարին Մյունխենյան անվտանգության խորհրդաժողովի ընթացքում:²⁴

²⁰ Процесс ратификации соглашения всеми членами ЕС близок к завершению в конце 2019 г. Брюссель. 25.09.2017. URL: <http://data.consilium.europa.eu/doc/document/ST-12525-2017-ADD-1/en/pdf>

²¹ Ֆիզիկայում դիֆուզիան շփվող նյութերի փոխադարձ ներթափանցումն է մասնիկների ջերմային շարժման հետևանքով:

²² Joyce Karam. MESA meeting doesn't mean security alliance forming soon // The National: International. 18.02.2019. URL: <https://www.thenational.ae/world/the-americas/esa-meeting-doesn-t-mean-security-alliance-forming-soon-1.827324>

²³ Connecting Europe-Armenia-Iran-Qatar: Ucom Exceeds Turkish Ones and Gets Involved in a Large Regional Project // Ucom. 27.02.2019. URL: <https://www.ucom.am/en/news/2019/02/27/connecting-europe-armenia-iran-qatar-ucom-exceeds-turkish-ones-and-gets-involved-in-a-large-regional/284>

²⁴ Видение было сформулировано следующим образом: «Роль Армении заключается в построении мостов, а не в их разрушении» // Армен Саркисян в беседе с Анной Каспарян. 17.02.2019. URL: <https://www.youtube.com/watch?v=XRzMB5GjjQg>

Ընդ որում կամուրջի դերը տարբերվում է ամալվել հայտնի միջնորդական գործունեությունից («բարի ծառայություններ»): Ի տարբերություն միջնորդության՝ կամուրջի դեր խաղացող երկիրը հավասարապես հանդիսանում է երկու կողմերի մի մասը և ցանկացած տեղաշարժի դեպքում իր վրա զգում է տեղի ունեցող փոխարկումների հետևանքները:

Այս առումով Հայաստանը կարող է խաղալ այն կամուրջի դերը, որը անհրաժեշտ է Եվրասիայի տարածքում երկու մեծ ինտեգրացիոն նախագծերին՝ ԵՄ-ին և ԵԱՏՄ-ին: Սա ենթադրում է համատեղ երկխոսություն և համագործակցություն տեղային մակարդակում, որի արդյունքները կարող են կիրառվել ավելի մասշտաբային նախաձեռնությունների ժամանակ: Բացի աշխարհաքաղաքական գործոնից՝ կամուրջ լինելու արդյունավետ դերին կարող են նպաստել հայկական հասարակությունում և պետությունում առկա սոցիալ-մշակութային այնպիսի շերտերի գոյությունը, որոնք հավասարապես մոտ են թե՛ ռուսական/ եվրասիական և թե՛ եվրոպական աշխարհահայացքին:

Հայկական արտաքին քաղաքականության բազմավեկտորության ևս մեկ օրինակ է ՆԱՏՕ-ի հետ գործակցությունը, որը սկսվել է 1994 թվականին, երբ Հայաստանը միացավ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին: Համագործակցության հիմնական ուղղություններն են խաղաղապահ գործունեությունը (հայկական ստորաբաժանումները գտնվում են Կոսովոյում (2004թ.-ից) և Աֆղանստանում (2020թ.-ից)) և բանակի արդիականացումը

(Հայաստանի ՉՈՒ սպայական կազմի որակավորման բարձրացում): Ընդ որում այս գործընկերությունը փոխազահավետ է և զարգանում է յուրահատուկ տրամաբանությամբ. Հայաստանը հնարավորություն է ստանում ամնչվելու արևմտյան ռազմական մտքին, իսկ ՆԱՏՕ-ն մեծացնում է Ռուսաստանի դաշնակիցների հետ իր կապերը և նոր ուժեր է ներգրավում խաղաղապահ առաքելությանը: Բոլոր կողմերը լավ գիտակցում են, որ Հայաստան-ՆԱՏՕ համագործակցությունը չի կարող ունենալ գոյություն ունեցող տարբերակից արմատապես տարբեր ձևաչափ՝ պայմանավորված աշխարհաքաղաքական բնական պատճառներով և գործակցության այժմյան մակարդակը ամբողջությամբ արտացոլում է առկա իրողությունները: Մակայն ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի միջև վստահության ցածր մակարդակը նկատի առնելով՝ Հայաստանը կարող է հանդես գալ որպես բնական հարթակ ոչ միայն երկխոսության, այլև գործնական համագործակցության համար այն հարցերում, որոնք առավել քիչ են քաղաքականացված: Որպես այդպիսին կարող է լինել բնական աղետների դեմ պայքարում ուժերի միավորումը:

Ստեղծված գլոբալ աշխարհաքաղաքական միջավայրում խոշոր աշխարհաքաղաքական միավորումների և մակրո-տարածաշրջանների հետ աշխատանքի հայկական փորձը երկու բևեռների համագործակցության հնարավորության հետաքրքրի օրինակ է՝ ինտեգրացումների դիֆուզիա: Այդպիսի արդյունքի հասնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է Հայաստանի վերոնկարագրյալ փորձի համակողմանի վերլուծություն:

Ռազմատեխնիկական համագործակցություն. ռազմարդյունաբերական համալիրի ոլորտում համագործակցության իրական հնարավորությունները՝ տարածաշրջանային շուկայի համատեքստում

Հայաստանի համար Ռուսաստանի հետ ռազմատեխնիկական համագործակցությունը հանդիսանում է անվտանգության ապահովման առանցքային գործոններից մեկը: ՀԱՊԿ շրջանակներում ռազմական տեխնիկայի ձեռք բերման արտոնյալ պայմանների հնարավորությունը և ռուս-հայկական պայմանագրերի ամկայությունը հնարավորություն է տալիս Հայաստանին գոնե որոշակի չափով պահել Ադրբեյջանի հետ ռազմական հավասակշռությունը:²⁵ Ոչ պակաս կարևոր էին նաև զենք զնայու համար 200 մլն և 100 մլն դոլլարին համարժեք ռուսական արտոնյալ վարկերի տրամադրումը:²⁶ Մակայն միայն Հայաստանի

կողմից ռուսական զենքի ձեռքբերումը չի արտացոլում երկու երկրների միջև ռազմատեխնիկական համագործակցության ողջ հնարավոր ներուժը. այն կարող է լուրջ առավելություններ տալ երկու երկրներին էլ:

Այդ ներուժը գտնվում է ռազմարդյունաբերական ուղղվածության համատեղ ձեռնարկությունների ստեղծման տիրույթում: Առաջին հերթին խոսք կարող է գնալ Հայաստանի տարածքում խորհրդային գրահատեխնիկայի համատեղ արդիականացման մասին. այդպիսի աշխատանքը բխում է Երևանի և Մոսկվայի ուղղակի շահերից, քանի որ Գյումրիի

²⁵ Нерсисян Л. Способны ли конфликты в Закавказье перерасти в региональную войну? // Российский совет по международным делам. 10.06.2019. URL: <https://russiancouncil.ru/analytcs-and-comments/columns/military-and-security/sposobny-li-konflikty-v-zakavkaze-pererasti-v-regionalnuyu-voynu/>

²⁶ Иванов С. Армению вооружаем, Эрдоган в уме // Газета.Ру. 19.02.2016. URL: <https://www.gazeta.ru/army/2016/02/19/8082797.shtml>

ռուսական 102-րդ բազան, ինչպես նաև հայկական ՉՈՒ-ը օգտագործում են չարդիականացված և հնացած մեքենաներ (ինչպես օրինակ T-72, БМП-1 և БМП-2 հետևակի զրահամեքենաներ, БТР-80 զրահափոխադրիչ և այլն): Յաշվի առնելով Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Յայաստանի տրանսպորտային շրջափակումը, ինչպես նաև ռազմական բեռներ տեղափոխելու վրացական արգելքը՝ վերոնշյալ տանկերը մինչև ռուսական Ուրալվագոնգավոդ (գտնվում է Նիժնի Տագիլում) և ապա հետ տեղափոխելու համար անհրաժեշտ է օգտվել ռազմա-տրանսպորտային օդուժից, իսկ դա շատ լրջորեն կբարձրացնի ծախսերը: Նկատի ունենալով զրահատեխնիկայի կապիտալ վերանորոգման և մասնակի արդիականացման համար Չարենցավանի մեքենաշինական գործարանի հնարավորությունները՝ Ուրալվագոնգավոդի հետ համատեղ այս գործարանի հիման վրա համատեղ ձեռնարկության ստեղծումը կարող է առավել նպատակահարմար լինել: Փաստացի, Ռուսաստանից անհրաժեշտ կլինի միայն բերել արդիականացման պահեստամասերը, ինչը մի

քանի անգամ կնվազեցնի տրանսպորտային ծախսերը: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ ՉՈՒ-ում և 102-րդ ռազմաբազայում առկա զրահատեխնիկայի քանակը հաշվի առնելով՝ ձեռնարկությունը «զբաղված» կլինի երկար տարիներ:

Չպետք է մոռանալ նաև մերձավորարևելյան շուկաների աշխարհագրական մոտիկությունը և Իրանի հետ Յայաստանի բաց սահմանը. նոր արդիականացված զրահատեխնիկայի և ցանկացած այլ ռազմական մթերք այստեղից կարելի է ավելի շուտ հասցնել հաճախորդին, քան Ռուսիի շրջաններից:

Եւս մեկ առավելություն կարելի է համարել ԵՄ հետ Յայաստանի լավ հարաբերություններն ու որոշակի ինտեգրացումը: Արտահանման ուղղվածություն ունեցող համատեղ ձեռնարկություններում հնարավոր կլինի ռազմական և երկակի նշանակության որոշ արևմտյան բաղադրիչների կիրառումը. այս դեպքում Երևանը կարող է ծառայել որպես յուրահատուկ կամուրջ Ռուսաստանի և Եվրոպայի միջև, որոնք այսօր բաժանված են պատժամիջոցներով:

Յայաստանը և Ռուսաստանը Սիրիայի քաղաքացիական պատերազմում. տարածաշրջանային համատեքստում ռազմական համագործակցության օրինակ

Սիրիայի արաբական Յանրապետությունում ծավալվող ռազմական հակամարտությունը առաջնային փուլում ծառայեց որպես պետությունների բևեռացման խթան: Նրանց մի մասը հանդես եկավ ի սատարումն գործող իշխանությունների և հայտարարեց երկխոսության ճանապարհով փոխզիջումներ գտնելու անհրաժեշտության մասին: Հակամարտությունը, բացի քաղաքական և ռազմական խորությունից, ունի նաև հումանիտար կողմ: Շարունակվող ռազմագործողությունների արդյունքում 2011 թվականից մինչև այսօր 5.6 միլիոն մարդ փախել է Սիրիայից և 6.6 մլն տեղահանվել են երկրի ներսում:²⁷ Ընդ որում ծագում են լուրջ դժվարություններ խաղաղ բնակչությանը սննդամթերքի և դեղորայքի ապահովման հարցում: Այս խնդիրների լուծման գործում մեծ մասնակցություն ունի Ռուսաստանը, որը 2017 թվականի դրությամբ իր ողջ օգնության 84%-ը ուղղել է արաբական հանրապետությանը:²⁸

Յայաստանի համար այս ճգնաժամն ունի համազգային ենթատեքստ կապված Սիրիայի տարածքում ապրող խոշոր հայկական

համայնքի հետ: Քանի որ պարբերաբար տեղեկություններ էին ստացվում այն մասին, որ ծայրահեղական խմբավորումների կողմից բռնություն էր գործադրվում քրիստոնյա և մասնավորապես հայ բնակչության հանդեպ, հնարավոր չէր հակամարտությունից հեռու բաշվել: Այդ պատճառով Յայաստանի ղեկավարությունը որոշում կայացրեց Սիրիային հումանիտար օգնություն ուղարկել: Այս առաքելությունը իրականացվում էր Սիրիայում ՀՀ դեսպանության, ՌԴ Հակամարտող կողմերի հաշտեցման կենտրոնի, ինչպես նաև Հայ առաքելական եկեղեցու Սիրիայի թեմի օժանդակությամբ: Ընդհանուր առմամբ Յայաստանն ուղարկել է 3 հումանիտար բեռ, որոնք նախատեսված էին Դամասկոսում, Լաթաքիայում, Յալեպում, Քեսաբում ապրող ընտանիքների համար:²⁹ Քեսաբի հայ բնակչությունը մեծ ողբերգություն ապրեց այն քանից հետո, երբ Թուրքիայի կողմից աջակցություն ստացող ծայրահեղական խմբավորումները գրավեցին այն:³⁰ Հումանիտար վերջին օգնությունը

²⁷ Total Registered Syrian Refugees // Operational portal refugee situations. August 15, 2019. URL: https://data2.unhcr.org/en/situations/syria#_ga=2.71947355.915270454.1565518199-432914033.1565518199

²⁸ Зайцев Ю., Кнобель А. Россия как международный донор в 2017 году // Мониторинг экономической ситуации в России. 2018. № 20(81). С. 18. URL: <https://www.ranepa.ru/images/News/2018-11/26-11-2018-monitoring-20-81.pdf>

²⁹ The humanitarian aid sent to Syria will be distributed among families affected by the conflict // Official website of the Ministry of Defence of the Republic of Armenia. February 15, 2017. URL: <http://www.mil.am/en/news/4639>

³⁰ Jean-Pierre Perrin. Les insurgés syriens font une percée vers la Méditerranée // Liberation. March 25, 2014. URL: https://www.liberation.fr/planete/2014/03/25/les-insurgés-syriens-font-une-percée-vers-la-mediterranee_990182

(142 տոննա) ուղարկվել է Յուժանիտար արձագանքման հայ-ռուսական կենտրոնի կողմից 2019 թվականի օգոստոսի 13-ին:³¹

Սիրիայում Երևանի և Մոսկվայի միջև հուժանիտար համագործակցության մեկ այլ ուղղություն հանդիսացավ հայ զինվորական մասնագետների (հուժանիտար սակրավորներ, բժիշկներ և անվտանգության ծառայության աշխատակիցներ) մասնակցությունը վերականգնողական աշխատանքներին: Այսպես, 2019 թվականի փետրվարի 8-ին ռուսական զինվորականների աջակցությամբ³² 83 մասնագետից կազմված խումբը, որը գործում է ՄԱԿ Անվտանգության խորհրդի 2393 և 2401 բանաձևերի համաձայն և Սիրիայից ստացված համապատասխան դիմումի հիման վրա, ժամանեց Սիրիա և տեղակայվեց Հայեպոլում: Երրորդ պետության տարածքում երկու դաշնակիցների միջև համագործակցության նմանատիպ ձևաչափը բացառիկ իրադարձություն է, քանի որ բոլոր գործողությունները իրականացվում են համատեղ արդյունավետ համակարգման միջոցով: Երկրորդ խումբը, որը ժամանեց հունիսի 4-ին, համաձայն Յուժանիտար ականագերծման և փորձաքննության կենտրոնի տվյալների, օգոստոսի 25-ի դրությամբ ականագերծել է շուրջ 49 հազար քառակուսի մետր տարածք, ինչպես նաև բժշկական օգնություն է ցուցաբերել Սիրիայի 2420 քաղաքացու:³³

Բացի հուժանիտար գործունից՝ Սիրիայի տարածքում ռուս գործընկերների հետ համատեղ հայ մասնագետների աշխատանքը ունի նաև քաղաքական ենթատեքստ: Հաշվի առնելով դաշնակցային հարաբերությունների խորությունը, ինչպես նաև գիտակցելով աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությունը ոչ ծշ

միայն սփյուռքի ներկայացուցիչներին, այլև արաբական հանրապետության ողջ բնակչությանը՝ Հայաստանը որոշում կայացրեց Ռուսաստանի հետ համատեղ մասնակցել հետպատերազմական Սիրիայի վերականգնմանը՝ չնայած ներքաղաքական փոխդասավորության արմատական փոփոխությանը: Այսպիսով բացահայտ աջակցելով և միանալով Սիրիայի ապագայի վերաբերյալ Մոսկվայի օրակարգին՝ Երևանը իր վրա վերցրեց որոշակի քաղաքական ռիսկեր, քանի որ կարող էր տվյալ օգնությունը ցուցաբերել ինչպես միջազգային ծրագրերի, այնպես էլ այլ կոալիցիայի հետ համատեղ: Հայաստանը, լինելով առաջին արտաքին խաղացողը, որը սատարեց ռուսական դիրքորոշումը, ստեղծեց նախադեպ՝ այդպիսով բացելով հնարավորություն այլ երկրների համար միանալու Սիրիայի հետպատերազմական վերականգնման գործընթացին, որում առաջատար համակարգող դեր ունի Ռուսաստանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ներկա փուլում Հայաստանի և Ռուսաստանի միջև համագործակցությունը գտնվում է պատմականորեն բարձր մակարդակի վրա: Չարգացնելով Սիրիայում երկկողմ գործակցության յուրահատուկ փորձը՝ երկու երկրները բացում են հնարավորությունը ՀԱՊԿ նոր դաշնակիցների ներգրավման հնարավորության համար՝ իրական մարտական գործողությունների պայմաններում համատեղ աշխատանքի փորձարկման և հետագա ճշգրտման նպատակով: Կարելի է ենթադրել, որ հենց նմանատիպ ձևաչափերը կարող են լրացնել կազմակերպության առաքելության տեսլականը և ընդլայնել դրա աշխարհագրական ներկայությունը: Ընդ որում՝ կարևոր է հարթել ներքին հակասությունները, որոնք կարող են խոչընդոտել երկարաժամկետ հեռանկարում արդյունավետ համագործակցությանը:

Հաշվի առնելով անվտանգության ոլորտում երկու երկրների ինտեգրացիայի մակարդակը՝

ռազմատեխնիկական ավանդական համագործակցությունը, որն այսօր դրսևորվում է բացառապես զինամթերքի մատակարարման տեսքով, կարելի է բարձրացնել որակապես նոր մակարդակի: Օրինակ՝ Երևանը ունի բավականաչափ ռեսուրսներ համատեղ արտադրության որոշ նախագծերում մասնակցության համար: Նմանատիպ համագործակցության ձևաչափը կարող է ունենալ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ բնույթ՝ ներգրավելով ստեղծվող ռազմական արտադրանքի գնորդներին:

Հայ-ռուսական տարածաշրջանային համագործակցության հնարավորությունները ունեն ընդլայնվելու ներուժ՝ Մեծ Մերձավոր Արևելքում նոր ձևաչափերի և դերակատարների ընդգրկմամբ: Այդ տեսանկյունից մի կողմից՝ Հայաստանի ռազմավարական հարաբերությունները Ռուսաստանի և ԵԱՏՄ հետ, մյուս կողմից՝ ԵՄ հետ Հայաստանի իրատեսական հարաբերությունները ներկայացնում են հետաքրքիր և մինչև վերջ չուսումնասիրված հենք: Հայաստանի որպես «կամուրջ երկրի»

³¹ Гуманитарная помощь Сирийской Арабской Республике // Официальный сайт Министерства по чрезвычайным ситуациям Республики Армения. URL: <http://www.mes.am/ru/news/item/2019/08/13/13082019/>

³² Armenian specialists arrive in Syria // Official website of the Ministry of Defence of the Republic of Armenia. 9.02.2019. URL: <http://www.mil.am/en/news/5921>

³³ Центр гуманитарного разминирования и экспертизы (ГНКО). URL: https://www.facebook.com/permalink.php?story_fbid=2092381907723379&id=1513184855643090

արտաքին քաղաքական հայեցակարգը կարող է նպաստել ոչ միայն տարածաշրջանային անվտանգության ամրապնդմանը, այլև աշխարհաքաղաքական տարբեր միությունների տնտեսական և քաղաքադական մերձեցմանը:

Հայ-ռուսական երկխոսության մեջ անվտանգության հարցը կարող է ունենալ ավելի լայն օրակարգ: Օգտագործելով իր ռազմավարական գործընկերոջ առավելությունները՝ Մոսկվան կարող է ձևավորել չեզոք հարթակ ավելի ռազմավարական խնդիրների (օր.՝ զինաթափման խնդիրը, միջուկային զենքից ազատ տարածքների ստեղծում և այլն) քննարկման համար: Երևանն այս դեպքում շահագրգիռ կողմ չէ և, համաշխարհային

ուժային կենտրոնների հետ ունենալով դրական հարաբերություններ, կարող է նմանատիպ հարցերի քննարկման համար հարթակ տրամադրել:

Այսօր վստահորեն կարելի է հանգել մի եզրակացության, որի գիտակցումը կարող է լայնացնել Ռուսաստանի հնարավորությունները Մոսկվայի վրա շարունակվող քաղաքական-դիվանագիտական ճնշումների պայմաններում: Հայաստանը, լինելով վստահելի ռազմավարական դաշնակից, կարող է նպաստել տարածաշրջանային և գլոբալ հիմնախնդիրների վերաբերյալ օրակարգի ձևավորմանը, ինչպես նաև ստեղծել հարթակներ պետությունների և ինստիտուտների միջև ուղիղ երկխոսության համար:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- 1.** ՀԱՊԿ անդամ երկրների անվերապահ հավատարմությունը կազմակերպության Կանոնադրության 9-րդ հոդվածին. միջազգային և տարածաշրջանային անվտանգային խնդիրների վերաբերյալ արտաքին քաղաքական դիրքորոշումների համաձայնեցում և համակարգում: Դաշինքի անդամ պետությունների կենսական շահերին և օրակարգին հակասող գործողությունները պետք է բացառվեն:
- 2.** Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի (ՕԱՀՈՒ) մշտական գործող ստորաբաժանման ստեղծում՝ տեղակայման պարբերական փոփոխմամբ, ինչը զինծառայողներին հնարավորություն կտա լավ ծանոթանալ հնարավոր ռազմական գործողությունների թատերաբեմերից յուրաքանչյուրին և արդյունավետ կերպով աշխատել դրանց դեմ:
- 3.** ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի փոփոխման մեխանիզմի ստեղծում՝ վերջինիս լիազորությունների վաղաժամ դադարեցման դեպքում և այդ փոփոխության իրավական ամրագրում:
- 4.** Հայաստանում ԵՄ և ԵԱՏՄ միջև ուղիղ երկխոսության և համագործակցության խնդիրների ու հեռանկարների քննարկման մշտական հարթակի ձևավորում («ԵՄ-ԵԱՏՄ ֆորում»):
- 5.** Բնական աղետների արդյունքում արտակարգ դրության հետևանքների վերացման ուղղությամբ համատեղ խորհրդակցությունների և միջոցառումների իրականացում՝ Հայաստանի ՉՈՒ, Գյումրիում 102-րդ ռուսական ռազմաբազայի և ՆԱՏՕ համապատասխան ստորաբաժանումների ներգրավմամբ:
- 6.** Ռազմաարդյունաբերական համատեղ ձեռնարկությունների հիմնում, որոնք ուղղված կլինեն թե՛ դեպի ներքին շուկա (Գյումրիում 102-րդ ռուսական ռազմաբազա և Հայաստանի ՉՈՒ), թե՛ դեպի արտաքին շուկաներ (մասնավորապես՝ դեպի Մերձավոր Արևելք): Առաջին հերթին անհրաժեշտ է դիտարկել Չարենցավանի հաստոցաշինական գործարանի հիմքի վրա Ուրալվագոնգավոդի հետ համատեղ ձեռնարկություն հիմնելու հնարավորությունը, որը նպատակ կունանա արդիականացնել T-72B տանկերը մինչև T-72B3 մակարդակի:
- 7.** Հայաստանում արտահանման համար նախատեսված ռազմամթերքի արտադրություն՝ ռազմական և երկակի նշանակության եվրոպական պահեստամասերի կիրառմամբ:
- 8.** ՀԱՊԿ դաշնակիցների օրակարգում ընդգրկել հետպատերազմական Սիրիայի համատեղ վերականգնման խնդիրը: Սա հնարավորություն կտա իրական ռազմական գործողությունների պայմաններում արդյունավետ կերպով կառուցել աշխատանքը, ինչպես նաև նշված ուղղությամբ ամրապնդել Ռուսաստանի դիրքերն: